

ԹՅՈՒՐՔԵՐԸ, ԹՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՄԵՆՔ

«ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ԿՈՎԿԱՍ ԵՎ ԻՐԱՆ-
ֆաղափակրթական փոխգործակցության խաչմերուկ»
միջազգային գիտաժողովի մասին

2009թ. հուլիսի 10-12-ին Շաղկաձորում, շուրջ 20 երկրների գիտնականների մասնակցությամբ կայացած այս գիտաժողովը կարելի է համարել հայ արևելագիտության գիտաքաղաքական լուրջ հայտը: Եթե նախորդ տարիներին մեզանում կազմակերպվող արևելագիտական գիտաժողովները նվիրվում էին նեղ-մասնագիտական հիմնահարցերի և առանձին տարածաշրջանների ու երկրների, օրինակ՝ Կովկասի ու Իրանի, պատմական շփումների ու մշակութային փոխազդեցությունների ուսումնասիրությանը, ապա վերջին գիտաժողովի «Թյուրքական աշխարհ-Կովկաս-Իրան» եռանդամ բանաձևը իր մեջ ներառել էր հարցերի շատ ավելի լայն շրջանակ:

1. Նախադասությունը

Գիտաժողովի կազմակերպիչներն էին գերմանական Լեյդեն քաղաքում հրատարակվող **"IRAN and the CAUCASUS"** գիտական հանդեսը, «Մոնիտեր» անկախ սոցիոլոգիական կենտրոնը, Հայ-թուրքմենական համագործակցության «Պարթև» կենտրոնը, Ակադեմիա-

կան համագործակցության և աշակերտության հայկական «Արմակադ» ասոցիացիան, որոնց մեծ մասը նախկինում ևս ակտիվորեն մասնակցել է նման միջոցառումներին: Իսկ նեղ-մասնագիտական առումով, գիտաժողովի հիմնական նախաձեռնությունը պատկանում էր ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. **Գառնիկ Ասաբյանին**, որը ողջ աշխարհի արևելագետների շրջանում կայուն հեղինակություն է ձեռք բերել:

«Թյուրքական աշխարհ, Կովկաս և Իրան-քաղաքակրթական փոխգործակցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովի հանդեպ աշխարհի տարբեր երկրների գիտնական-արևելագետների ուշադիր ու շահագրգիռ վերաբերմունքը պայմանավորված էր նրանով, որ թեման ընդգրկում էր թյուրքական աշխարհի, Իրանի ու Կովկասի կապերի ու փոխազդեցությունների՝ մինչ օրս բավարար կերպով չուսումնասիրված հիմնահարցը: Դա որոշակի հետաքրքրություն էր առաջացրել նաև Թուրքիայի և ակնհայտ խուճապ՝ Ադրբեջանի գիտական շրջա-

նակներում, ինչի արտահայտությունն էին դարձել գիտաժողովի կազմակերպիչների արձանագրած բազմաթիվ հաքերային գրոհները իրենց սայթի վրա:

Չնայած այդ ամենին, 2009թ. հուլիսի 10-12-ին Ծաղկածորում կայացած արևելագետների համաժողովի մասնակից գիտնականների թիվը բավականին պատկառելի էր: Նրանք ներկայացնում էին Ռուսաստանի մայրաքաղաքն ու առանձին ինքնավարությունները (Թաթարստան, Դաղստան), Իրանը, Միացյալ Նահանգները, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ավստրիան, Իտալիան, Իսրայելը, Հունգարիան, Վրաստանը ու նաև՝ Թուրքիան: Մասնակիցների թվում մեծ էր Հայաստանի ու Սփյուռքի գիտնականների տեսակարար կշիռը: Իսկ ահա մասնագիտական առումով գիտաժողովին ներկայացել էին թյուրքագետներ, իրանագետներ, կովկասագետներ և իհարկե՝ հայագետներ:

2. Գիտ-ֆաղափական նդասակները

Մեր երկրի վերանկախացումից հետո անցած տասնամյակներում Հայաստանի պետական ու քաղաքական շրջանակները այդպես էլ չեն կարողացել գտնել երկու թուրքական պետությունների՝ Թուրքիայի ու Ադրբեջանի շրջափակումից ձերբազատվելու ուղիները: Դեռևս 1920-1940-ական թվականներին հայ աշխարհաքաղաքական մտքի առավել հեռատես ներկայացուցիչները, մասնավորապես՝ Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան), նախագուշացնում էին, որ վերանկախացման արդյունքում Հայաստանը բախվելու է իր տարածքները զավթած Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ճանապարհային շրջափակման սպառնալիքի հետ: Ու թեև Ղարաբաղյան

պատերազմը որոշ չափով թուլացրեց թուրք-ադրբեջանական շրջափակման աքցանի «արևելյան շոշափուկը», բայց ստեղծեց հենց Ղարաբաղի հարցի առկայությամբ «պատճառաբանվող» ավելի լայն շրջափակման օղակ:

Այս պայմաններում մեր երկրի ապաշրջափակման գիտականորեն հիմնավորված լուծումները գտնելու և ծրագրված քաղաքականություն իրականացնելու փոխարեն՝ 2008-ի սեպտեմբերից Հայաստանի իշխանությունների նախաձեռնած «ֆուտբոլային դիվանագիտությունը» անխուսափելիորեն հանգեցնելու էր տխուր հետևանքների: Հայոց նոր շրջանի պատմության դառը դասերն անտեսող այս քաղաքականության հետևանքով ներկայումս թուրք-ադրբեջանական աքցանի շրջագծում Հայաստանի ցանկացած «շարժում» միայն ու միայն բացասական հետևանքների է հանգեցնում: Դրա արդյունքում, օրինակ, հայ-թուրքական իբր-թե՝ երկկողմ և առանց նախապայմանների երկխոսությունը վերածվում է Թուրքիայով միջնորդավորվող՝ Ղարաբաղի հարցի լուծման գերտերությունների պարտադրանքի: Այսինքն՝ որքան Հայաստանը փորձում է հետ մղել այդ աքցանի շոշափուկներից մեկը՝ թուրքականը, այնքան իր թիկունքի վրա ավելի ու ավելի է զգում մյուսի՝ ադրբեջանականի, առաջանալու և սեղմելու ծակող ցավը: Ապագայում՝ հայ-ադրբեջանական երկխոսության դեպքում, մույնը կրկնվելու է հակառակ հաջորդականությամբ, այսինքն՝ աքցանի ադրբեջանական շոշափուկը հետ մղելու փորձերի արդյունքում մեր կրծքի վրա զգալու ենք այս անգամ էլ թուրքական շոշափուկի ծակող ցավը:

Հայաստանի հանդեպ գործող թուրք-ադրբեջանական աքցանի միասնակա-

նությունն ու անբաժանելիությունն անտեսելու հարցում երկրի քաղաքական դեկլարարության համառությունը վկայում է Հայոց նոր ու նաև՝ նորագույն պատմության դասերը խորությամբ չընկալելու մասին: 1918 թվականին՝ Հայաստանի Հանրապետության ձևավորման արշալույսին, ՀՅԴ առաջնորդ Ռոստոմը հնչեցրել է. «...Ադրբեյջանի կառավարութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է որ գծում է Ադրբեյջանի անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի լուծման տեսակետից պարզ է¹»՝ նախագուշացումը, որը խիստ արդիական է նաև մեր օրերում:

Այս պայմաններում Ծաղկաձորում տեղի ունեցած «Թյուրքական աշխարհ, Կովկաս և Իրան-քաղաքակրթական փոխգործանկցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովի կարևորությունը նրանում էր, որ սովյալ ձևաչափը իր խորքում պարունակում է անկախացած Հայաստանի ապաշրջափակման որակապես նոր բանաձև: Դա «Հարավային Կովկաս» արհեստական տարածաշրջանը արևելքից բացելով և ընդլայնելով՝ Հայաստանը ապաշրջափակելու այն նոր հնարավորությունն է, որն ուրվագծվում է մեր երկրի անկախացման արդյունքում: Վերջինիս իրականացումը կախված է նրանից, թե որպես պետություն ու ժողովուրդ որքանով ենք ներքուստ մեզ անկախ զգում, քանի որ մեր փոխարեն ոչ ոք շահագրգռված չէ թուրքադրեջանական արքանը «կոտրելու» հարցում: Իսկ «Թյուրքական աշխարհ-Կովկաս-Իրան» ձևաչափը Հայաստանի համար ստեղծում է թուրք-ադրբեյջանական արքանը Իրանի վրայով դեպի Միջին (Կենտրոնական) Ասիա, Ռուսաստ-

տան ու Մերձավոր և Միջին Արևելք բացելու լայն հնարավորություններ:

Այս համատեքստում առաջ է գալիս բուն թյուրքական աշխարհի՝ Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Դրոզդստանի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության մեջ մտնող թյուրքալեզու ինքնավար կազմավորումների հետ Հայաստանի նորովի հարաբերվելու հրամայականը: Ուստի, հայ արևելագիտական միտքը առաջ է քաշում մեր հասարակական-քաղաքական շրջանակների կողմից հաճախ նույնացվող՝ «թյուրքեր» լեզվական ընդհանրության և «թուրքեր» էթնիկ անվան հստակ տարանջատման, այսինքն՝ թյուրքականը «**Turkic**» թուրքականից՝ «**Turkish**» տարբերակելու խնդիրը:

Ինչպես իրավացիորեն պնդում է գիտաժողովի կազմակերպիչներից մեկը՝ պրոֆ. Գ. Ասատրյանը, թյուրքական աշխարհի հետ սոսկ լեզվական ընդհանրություններ պահպանող թուրքերն ու ադրբեյջանցիները իրենց մարդաբանական, մշակութային և այլ հատկանիշներով չեն կարող «թյուրքեր» համարվել, որքան էլ օգտագործեն այդ երկու հասկացությունները թվում է, թե միավորող՝ **türk** ինքնանվանումը: Իսկապես, առաջին երկուսի մոտ այսօր էլ շարունակվում է սեփական ինքնության փնտրտուքը, որի արդյունքում բախվում են ավանդական քենալիզմը, տարածաշրջանի հին ժողովուրդների պատմության յուրացման անհաջող փորձերը և իրենց համաեվրոպական մշակութային տարածության մեջ դիտարկելու ծամածռությունները: Ավելին, Թուրքիայի ազդեցության տարածումը Ադրբեյջանում հանգեցրել է նրան, որ արդեն առաջ է

¹ Արամ Ալեյզեան, Ռոստոմը Բագում, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրուք, Համազգայինի Վահէ Սէբեան տպարան, 1979, էջ 325:

քաշվում 1936-ին Ստալինի կողմից պարտադրված «ադրբեջանցի» արհեստական անվանումից հրաժարվելու և նորից «թուրք» կոչվելու խնդիրը:

Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի Ձեռագրերի ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ֆարիդ Ալեքպերլին, օրինակ, կարծում է, որ «ադրբեջանցի» արհեստական անվան յուրացումը հանգեցնում է Ադրբեջանի «պետականաստեղծ ազգի»՝ թուրք ժողովրդի դիմագծի աղճատմանն ու նրա ուծացմանը²: Իսկ «ադրբեջանցիների» ծագումնաբանությունը շումերներից, մարերից կամ ադվանացիներից սկսող իր հայրենակիցների վերջին տասնամյակների «գիտական բանավեճերը» Ֆարիդ Ալեքպերլին պարզապես համարում է «հոգնեցուցիչ ու հիմար»³:

Ճիշտ հակառակ ուղղությամբ է ընթանում Կենտրոնական (Միջին) Ասիայի թյուրքալեզու երկրների ու ժողովուրդների ինքնության փնտրտուքը: Եթե թուրք, իսկ վերջերս նաև՝ ադրբեջանցի գիտնականները իրենց շեշտադրումները շարունակում են կառուցել թյուրքական աշխարհի միասնության վրա, այս նորանկախ երկրները, ընդհակառակը, հիմնականում փորձում են լեզվական, մշակութային և այլ ասպեկտները առանձնացնել քաղաքականից: Պատճառն այն է, որ Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանն ու Դրոբզուստանը փորձում են սահմանազատվել նախկին ԽՍՄՀ-ի փոխարեն ներկայումս իրենց առաջարկվող «թյուրքական միասնության» գաղափարից և կայանալ իբրև անկախ, ինքնիշխան պե-

տություններ ու ազգեր՝ սեփական մշակույթով, տնտեսական ու քաղաքական շահերով: Իսկ դա արմատապես հակասում է Կենտրոնական Ասիայի տափաստաններից ժամանակին Առաջավոր Ասիա ներխուժած թափառական սելջուկ-թուրքերի ժառանգների նպատակներին: Վերջիններիս համակած ինքնության ճգնաժամի հիմքում ընկած է այն իրողությունը, որ նրանք Հայրենիքի խնդիր ունեն, որը փորձում են լուծել Ալթայից մինչև Բոսֆոր ընկած տարածքները ընդարձակումով՝ յուրացնելու միջոցով, քանզի թուրքերի ու ադրբեջանցիների ներկա «Հայրենիքները» որևէ կապ չունեն սեփական ինքնության հետ:

Այն իրողությունը, որ Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու նորանկախ երկրները ոչ թե Հայրենիքի, այլ Ազգ-Պետության խնդիր ունեն, իբրև ռազմավարական նպատակ ժամանակին բանաձևել է ինքնիշխան ու չեզոք Թուրքմենստանի հիմնադիր Սափարմուրադ Նիյազովը (Թուրքմենբաշի) իր «Ռուհնամա» երկհատոր աշխատության մեջ: «Հիմք դնելով ավելի քան յոթանասուն պետության,- գրում էր հանգուցյալ Սափարմուրադ Նիյազովը,- շրջելով աշխարհեաշխարհ՝ թուրքմենները նորից ու նորից վերադարձել են իրենց հողը, ուժ չգտնելով բաժանվել նրա լեռներից ու հովիտներից, անապատի հանելուկային սքանչելիքից ու ծովի երզի ոգեշնչումից...»⁴: Այսինքն՝ ի տարբերություն թուրքերի ու ադրբեջանցիների, որոնք այդպես էլ մնացել են «հավերժական գրոսաշրջիկների» կարգավիճակում, թուրքմենները թողել են օտարի բարիք-

² Տե՛ս Ֆարիդ Ալեքպերլի *Кто мы, от кого произошли, и куда идем?* www. Zerkalo.az, 08.08.2009.

³ Նույն տեղում:

⁴ Սափարմուրադ Թուրքմենբաշի, Ռուհնամա, Եր.- «Պարթև» հայ-թուրքմենական համագործակցության կենտրոն, 2005, էջ 63:

ները ու վերադարձել են իրենց Հայրենիք, ուստի Սափարմուրատ Նիյազովը եզրակացնում էր, որ «Օղուզ» ասելով՝ մենք հասկանում ենք թուրքմեն⁵»: Եվ եթե օղուզների պատմությունը սեփական Հայրենիքին հավատարիմ մնացած թուրքմենների պատմությունն է, ապա վերջիններիս համար «թյուրք» հասկացության միջոցով իրենց միավորելու փորձեր անող թուրքերն ու աղբբեջանցիները սոսկ օտար «հյուրանոցում» բնակվող զբոսաշրջիկներ են: Ուստի, պատահական չէր, որ Ս. Նիյազովը թվարկելով սելջուկների և ապա՝ ակ-կոյունլու թուրքմենների գրաված առաջավորասիական երկրները, դրանցից որևէ մեկին այդպես էլ չէր տալիս «Աղբբեջան» կամ «Թուրքիա» անվանումը, այլ խոսում էր Ատրպատականի, Հայաստանի և ապա՝ Անատոլիայի մասին⁶:

Թուրքմենստանի որդեգրած մման դիրքորոշման պատասխանն էր ժամանակին Հայաստանի տարածքին տիրացած կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի կառավարիչներից մեկի՝ Էմիր Սաադի Երևանի մերձակա Արզավանո գյուղում գտնվող դամբարանի նորոգումը՝ Հայաստանի իշխանությունների ու հայ գիտնականների կողմից: Սա հայ մարդուն և Հայաստան պետությանը բնորոշ՝ իր տարածքում ստեղծված օտար մշակույթի հուշարձանների հանդեպ հարգանքի արտահայտություն է, ինչը հանդիսանում է Նախիջևանում Հին Ջուղայի խաչքարերի բարբարոսական ավերման փաստի աղաղակող հակապատկերը: Թուրքմենստանի նախկին ղեկավարի քաղաքականության շարունակությունն է այդ երկրի նոր նախագահ Գուրբանգուլի Բեդիբնուհամեդովի կողմ

մից Կասպից ծովի՝ Թուրքմենստանին պատկանող հանքավայրերը յուրացնող Աղբբեջանի դեմ միջազգային դատ բացելու մտադրությունը: Այսպիսով, Կենտրոնական Ասիայի նորանկախ երկրների (առաջին հերթին՝ Թուրքմենստանի և Ուզբեկստանի) քաղաքական վերնախավերի համար «թյուրքական միասնության» կարգախոսը աստիճանաբար վերածվում է պետականության գաղափարի դեմ ուղղված սպառնալիքի, ինչը բարենպաստ դաշտ է ստեղծում նրանց հետ Հայաստանի Հանրապետության ավելի սերտ համագործակցության համար: Իսկ պատկառելի բնական պաշարներ, մանավանդ՝ էներգակիրներ, ինչպես նաև հայկական սովոր համայնքներ ունեցող Կենտրոնական Ասիայի երկրների հետ Հայաստանի հարաբերությունների սերտացման գործում բնական կամուրջի դերն անցնում է Իրանին: Փոխադարձ շահերի մման եռանկյունաձև համակարգի ձևավորման ու ամրապնդման խնդիրը թելադրում է «Թյուրքական աշխարհ-Կովկաս-Իրան» ձևաչափով հաճախակի գիտաժողովներ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Նախ՝ գիտական հիմնավորումների միջոցով, իսկ հետագայում նաև՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային նախաձեռնություններով Կենտրոնական Ասիան, Իրանն ու Կովկասը ներառող շատ ավելի ընդարձակ տարածաշրջանում գործելու հեռանկարը Հայաստանի համար ուրվագծում է Թուրքիայի առաջադրած «Կովկասի կայունության ու անվտանգության» պլատֆորմ-ծուղակից խուսափելու և Իրանի վրայով դեպի Կենտրոնական Ասիայի երկրները «բացվելու» հնարավորություններ:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 120-122:

Ի դեպ, ժամանակին այդտեղով էր անցնում նաև պատմական «Մետաքսի ճանապարհի» հիմնական կամ միջին երթուղին: Այն Թավրիզից մտնում էր Արարատյան դաշտավայր՝ Հին Ջուղայի մոտ գտնվող Արաքսի ծանծաղուտներով և ապա՝ Նախիջևանի վրայով շարժվում դեպի Հայաստանի Դվին ու Արտաշատ մայրաքաղաքները, որտեղից էլ ճյուղավորվում էր մի կողմից՝ Վիրքի վրայով դեպի Սև ծովի ափերը, իսկ մյուս կողմից՝ Անիի վրայով դեպի Կարս ու Կարին և ապա՝ կամ Տրապիզոն ու Սինոպ, կամ էլ՝ Անգորայի (Անկարայի) գծով մինչև Կոստանդնուպոլիս: Այս երթուղու նախկին գործառույթների վերականգնման համար անհրաժեշտ «Իրան-Հայաստան» երկաթուղու կառուցումը կարող է դառնալ «Մետաքսի ճանապարհը» Սև ծովի ափերից դեպի Ադրբեջանի մայրաքաղաք շեղելու, այսինքն՝ այն Թուրանի ճանապարհով նենգափոխելու փորձերի կանխարգելման գրավականը: Ուստի, «Իրան-Հայաստան» երկաթուղու կառուցման առաջադրանքը, որը կարող է դառնալ եվրասիական ողջ երկաթուղային համակարգի առանցքային օղակներից մեկը, մեր երկրի համար ձեռք է բերում էլ ավելի մեծ կարևորություն:

3. Գիտաժողովի ընթացքը

Ծաղկածորի Գրողների միության տանը կայացած «Թյուրքական աշխարհ, Կովկաս և Իրան-քաղաքակրթական փոխգործակցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովի առաջին օրը՝ հուլիսի 10-ը, նվիրված էր բացման հանդիսավոր արարողությանը և պլենար (ընդհանուր) նիստում կարդացվող զեկույցներին: Դրանցից առավել մեծ հետաքրքրություն էին ներկայացնում Ահարոն Ադրիբեկյանի (Հայաստան)

«Քաղաքակրթական կոնտակտների սոցիալ-մշակութային ասպեկտը», Լևոն Ջեքիյանի (Իտալիա) «Քաղաքակրթական գործընթացների վեկտորները տարածաշրջանում», Յանգ Քսիի (Չինաստան) «Հայերը և նրանց մասին գրությունները Քինգ միջին դինաստիայի դարաշրջանում», Գառնիկ Ասատրյանի (Հայաստան) «Տարածաշրջանային քաղաքակրթական շփումների մասին» զեկույցները:

Պետք է արձանագրել, որ կարդացված զեկույցների բարձր մակարդակը աղաղակող հակադրության մեջ էր բացման համեստ ու անշուք արարողության հետ, որը առաջին հերթին պայմանավորված էր գիտաժողովի հանդեպ Հայաստանի պետական ղեկավարության լուր անտարբերության փաստով:

Հուլիսի 10-ի օրվա երկրորդ կեսին գիտաժողովի մասնակիցները շարունակեցին իրենց աշխատանքները սեկցիաների (բաժանմունքների) նիստերում, որոնց կազմակերպման համար առանձնացվել էին միանգամից 9 թեմաներ.

- 1) Լեզվական ասպեկտ (դիտանկյուն),
- 2) Պատմական ասպեկտ,
- 3) Սոցիո-մշակութային ասպեկտ,
- 4) Քաղաքակրթական ասպեկտ,
- 5) Հոգևոր-կրոնական ասպեկտ,
- 6) Թյուրք-իրանական ասպեկտ,
- 7) Թյուրք-կովկասյան ասպեկտ,
- 8) Թյուրք-հայկական ասպեկտ,
- 9) Ներկան և ապագայի տեսլականը:

Այս դիտանկյունների համակողմանի վերլուծությունը շարունակվեց նաև գիտաժողովի հաջորդ օրերին, որոնց ընթացքում հնչեցին բազմաթիվ հետաքրքրական զեկույցումներ, տեղի ունեցան քննարկումներ:

Դրանցից կարելի է առանձնացնել Սամվել Մարգարյանի (Հայաստան)

«Առաջին սելջուկյան սուլթանների կերպարները՝ 11-13-րդ դարերի հայ դասնագրության մեջ»,

Լինա Սելբոմյանի (Իրան)

«The Status of Silk Road in the History of Iran»⁷,

Շանդոր Ֆոլդվարի (Հունգարիա)

«Nomadic Peoples in Ancient Greek Sources Remarks on The Hellenistic Caucasian Cultures»,

Լևոն Եպիսկոպոսյանի (Հայաստան)

«Common Patrilineal Genetic Origin of the Yezidis Living in Armenia and Muslim Kurds from Iraq»,

Սարկուս Ռիտտերի (Ավստրիա)

«Islamic architecture in Eastern Armenia Iranian and local tradition in the early 19-th century mosque of the citadel of Erevan»,

Դան Շապիրոյի (Իսրայել)

«Iran-o Turan Iranian (and Quasi-Iranian) in the Ruh-Namah and Turkmen Sources of the First Part of the Book»

և այլ հետաքրքրական զեկուցումներ:

Բացի բաժանմունքների նիստերում հնչած զեկուցումներից, գիտաժողովի երկրորդ օրվա առաջին կեսին տեղի ու-

նեցած լիագումար նիստում ընթերցվեցին ու քննարկվեցին՝

Փիրմուհամադի Ալմաշիի (Իրան)

«Հայերի դերը Իրանի մշակույթի և ֆաղափակրթության մեջ (Մեֆեյանների դասաբան)»,

Յու. Ավերյանովի (Ռուսաստան)

«Հաջի Բեքբաբ Վելին որդես անասոլիական մշակույթի ներկայացուցիչ»,

Մեդր Գյուլումյանի (Հայաստան)

«Տարածաբանային նախագծերի հեռանկարները» զեկուցումները:

Գիտաժողովի երրորդ օրը՝ հուլիսի 12-ին, ամփոփիչ զեկուցումներով հանդես եկան Լևոն Ջեքիյանը (Իտալիա), Դարյուշ Բորբորը (Իրան), Ռալֆ Կլաուսը (Ավստրիա):

Այսպիսով, «Թյուրքական աշխարհ, Կովկաս և Իրան-քաղաքակրթական փոխգործակցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովը անվիճելիորեն ստացվեց՝ որպես գիտական միջոցառում: Մնում է, որ նրա քաղաքական կարևորությունը գիտակցեն նաև Հայաստանի պետական ու քաղաքական շրջանակները:

Գ. Խ

Summary

TURKICS, TURKS AND US

About the conference

“THE TURKIC WORLD, THE CAUCASUS AND IRAN-
the crossroad of political interaction”

G.Kh.

⁷ Ձեկուցումների վերնագրերը ներկայացվում են առանց թարգմանության այնպես, ինչպես դրանք ձևակերպված էին գիտաժողովի պաշտոնական ազդագրում: